Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1012-28.10.2010-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 26-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով՝

«5. Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող կամ որպես մանկավարժ, դասախոս աշխատող օտարերկրյա անձի ծնողներին, ամուսնուն, զավակին, քրոջը կամ եղբորը Հայաստանի Հանրապետությունում կացության ժամանակավոր կարգավիճակ և կացության քարտ տալու, կացության ժամանակավոր կարգավիճակի ժամկետը երկարաձգելու, ինչպես նաև հաշվառելու համար պետական տուրքը նվազեցվում է 60 տոկոսի չափով: Սույն մասով նախատեսված արտոնությունից օգտվելու համար պահանջվող՝ Հայաստանի Հանրապետությունում սովորող կամ որպես մանկավարժ, դասախոս աշխատող օտարերկրյա անձանց ծնող, ամուսին, զավակ, քույր կամ եղբայր հանդիսանալու փաստը հավաստող փաստաթղթերի ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետությունան կառավարության որոշմամբ:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ արված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	Հոդված 1	1. Օրենքի 26-րդ հոդվածում լրացվող նոր 5-րդ մասում համապատասխան արտոնությունը նախատեսել նաև Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում որպես մանկավարժ, դասախոս աշխատող օտարերկրյա անձանց մերձավոր ազգականների՝ ամուսնու, ծնողների և զավակի համար: 2. Օրենքի 26-րդ հոդվածում լրացվող նոր 5-րդ մասում արտոնությունից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև համապատասխան օտարերկրյա անձանց քրոջ և եղբոր համար: 3. Օրենքի 26-րդ հոդվածում լրացվող նոր 5-րդ մասում «հանգամանքը» բառը փոխարինել «փաստը» բառով:	1. Առաջարկության հիման վրա հոդվածը խմբագրվել է: 2. Առաջարկության հիման վրա հոդվածը խմբագրվել է: 3. Առաջարկության հիման վրա հոդվածը խմբագրվել է: